

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ֆիզիկական անձանց MIR Classic դեբետային քարտեր¹

N	Ծառայության անվանումը / սակագին ² (ՀՀ դրամ)	Mir Classic
1	Քարտի թողարկում	
	ՀՀ ռեզիդենտ հաճախորդ	12,000 ՀՀ դրամ
	ՀՀ ոչ ռեզիդենտ հաճախորդ	50,000 ՀՀ դրամ
2	Քարտի սպասարկում	
	մինչև 31.03.2024թ. թողարկված քարտերի համար	տարեկան - 5,000 ՀՀ դրամ ամսական - 500 ՀՀ դրամ
	01.04.2024թ.-ից հետո թողարկված քարտերի համար	Անվճար
3	Քարտային հաշվի դրական մնացորդին տարեկան հաշվեգրվող տոկոսադրույք	0%
4	Կանխիկ միջոցների տրամադրում	
	«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ բանկոմատներում	0.15%
	ՎՏԲ խմբի բանկոմատներում	1.5%, min 500 ՀՀ դրամ
	այլ բանկերի բանկոմատներում և POS-տերմինալներում	1.5%, min 500 ՀՀ դրամ
5	ՎՏԲ-Հայաստան Բանկի բանկոմատներում օրական կանխիկացման առավելագույն սահմանաչափ	1,000,000 ՀՀ դրամ
6	ՎՏԲ-Հայաստան Բանկի բանկոմատներում մեկ գործարքի առավելագույն սահմանաչափ	500,000 ՀՀ դրամ
7	Գերաձախսի նկատմամբ հաշվեգրվող տարեկան տոկոսադրույք	12%
8	Բանկից քաղվածքների ստացման Հաճախորդի կողմից հաղորդակցման Նախընտրված եղանակով առաջին անգամ պարտադիր քաղվածքի տրամադրում ցակացած ժամանակահատվածի համար	անվճար
9	Հաճախորդի պահանջով մեկ անգամից ավել քաղվածքի տրամադրում մասնաճյուղում	Մինչև 1 տարի վաղեմության - 1900 ՀՀ դրամ 1 տարուց ավել վաղեմության - 3900 ՀՀ դրամ
10	Քարտի մուտքագրում/ելքագրում STOP ցանկ	անվճար
11	Բանկի բանկոմատի կողմից առգրավված քարտի շտապ տրամադրում	5,000 ՀՀ դրամ
12	Քարտից քարտ փոխանցումներ Բանկի բանկոմատների միջոցով	
	«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ MIR քարտերից «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ այլ քարտերին (AMD, USD, EUR, RUB)	անվճար
	«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ MIR քարտերից Arca քարտերին	անվճար
	Մեկ փոխանցման առավելագույն գումար	400,000 ՀՀ դրամ
	Օրական փոխանցումների առավելագույն գումար	400,000 ՀՀ դրամ
	Փոխանցումների ամսական առավելագույն գումար	առանց սահմանափակումների

1. Վճարային քարտերի նկարագրությունը, հիմնական պայմաններ²

1.1. Վճարային քարտերը (այսուհետ՝ ՎՔ) բացվում են ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց կողմից Դիմում-պայմանագրի կնքման դեպքում և տրամադրվում են 3-5 աշխատանքային օրվա ընթացքում:

1.2. Հաճախորդը ՎՔ Դիմում-պայմանագրի կնքելու համար «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) է ներկայացնում

- անձը հաստատող փաստաթուղթ,
- հանրային ծառայությունների համարանիշ կամ վերջինս չունենալու մասին տեղեկանք,
- հաճախորդի ներկայացուցչի դեպքում՝ պատշաճ վավերացված լիազորագիր,
- Բանկի կանոնակարգերով սահմանված լինելու դեպքում՝ այլ լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն:

¹ Բացառությամբ աշխատավարձային և թոշակային քարտերի

² Սակագները ամբողջությամբ հասանելի են Բանկի կայքում

1.3. ՎՔ դիմում-պայմանագիրը կնքվում է 5 տարի ժամկետով:

1.4. ՎՔ կցվում է 4 արժույթի հաշիվ՝ AMD, USD, EUR, RUB արժույթներով:

1.5. ՎՔ բացման համար նվազագույն մնացորդային գումար սահմանված չէ:

1.6. ՎՔ օգտագործման տարածաշրջանը սահմանվում է MIR վճարահաշվարկային համակարգի սպասարկող երկրներով, որոնք հրապարակված են վճարային համակարգի պաշտոնական կայքում:

1.7. Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկման կարգին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ https://www.cba.am/AM/laregulations/Regulation_8.02.pdf:

Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկի օրինակ.

Քարտին գումարի մուտքագրման օր – 01.09.2023թ.

Քարտին մուտքագրված գումար – 200.000 ՀՀ դրամ

Տարեկան տոկոսադրույք – 3%

Տոկոսագումարի վճարումը – ժամկետի վերջում

Քարտին գումարը պահպանելու ժամկետը – 365օր

Եկամտային հարկի դրույքաչափ – 10%

Հաշվարկ – $200000 \cdot 3\% / 365 \cdot 364 = 5983,56$ ՀՀ դրամ

Եկամտահարկ – $5983,56 \cdot 10\% = 598,35$ ՀՀ դրամ

Քարտապանի ստացված եկամուտ՝ $5983,56 - 598,35 = 5385,21$ ՀՀ դրամ

1.8. Բանկային հաշվի վրա հաշվեգրվող տարեկան տոկոսադրույքի փոփոխման վերաբերյալ Բանկը հաճախորդին տեղեկացնում է, վերջինիս կողմից ընտրված տարբերակով՝ փոփոխման օրվանից առնվազն 30 օր առաջ, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով: Բանկի կողմից տեղեկատվությունը համարվում է Հաճախորդին տրամադրված՝ այն վերջինիս փոստային/էլեկտրոնային հասցեով ուղարկելու կամ Բանկի տարածքում վերջինիս համար այն հասանելի դառնալու պահից:

1.9. ՎՔ-ով կարող են իրականացվել հետևյալ գործառնությունները՝

- ապրանքների և ծառայությունների համար անկանխիկ վճարումներ (ժամանակավորապես անհասանելի),
- օնլայն գործարքներ (սահմանափակ կայքերում),
- դրամական միջոցների մուտքեր և ելքեր,
- ներբանկային և միջբանկային փոխանցումներ, այդ թվում քարտից քարտ,
- արտարժույթի անկանխիկ փոխարկման գործառնություններ,
- այլ գործառնություններ՝ համաձայն Բանկում գործող ՎՔ պայմանների և սակագների:

1.10. ՎՔ սպասարկումն ու միջնորդավճարների գանձումն իրականացվում է երկկողմանի կնքվող Դիմում պայմանագրի, տվյալ քարտի տեսակի համար հաստատված սակագների, Դեբետային քարտերի տրամադրման կանոնների՝ համաձայն ""ՎՏԲ-Հայաստան Բանկ" ՓԲԸ կողմից ֆիզիկական անձանց մատուցվող ծառայությունների պայմաններ և կանոններ"" (այսուհետ՝ ՕՖԵրտա) 8-րդ գլխի, ինչպես նաև ՀՀ օրենսդրության և վճարային կազմակերպությունների կանոնների հիման վրա:

1.11. Ամսական սպասարկման միջնորդավճարը (կիրառման դեպքում) գանձվում է ընթացիկ ամսվա վերջին աշխատանքային օրը: Գանձման պահին ՎՔ-ի կամ Հաճախորդի այլ հաշիվների վրա բավարար դրամական միջոցների բացակայության դեպքում տվյալ ամսվա սպասարկման վճարը գանձվում է ՎՔ կամ այլ հաշիվներին դրամական միջոցների մուտքագրման առաջին իսկ օրը:

1.12. ՎՔ սպասարկման համար վճարը (կիրառման դեպքում) գանձվում է պայմանագրի ստորագրման պահին: Հետագայում վճարման ամսական եղանակի ընտրության դեպքում, գանձվում է յուրաքանչյուր հաջորդող օրացուցային ամսվա առաջին աշխատանքային օրը, իսկ տարեկան եղանակի ընտրության դեպքում՝ գանձվում է հաշվից յուրաքանչյուր հաջորդող օրացուցային տարվա առաջին ամսվա առաջին աշխատանքային օրը՝ քարտի գործողության ողջ ժամկետի ընթացքում առանց լրացուցիչ թույլտվության:

1.13. Բանկը երաշխավորում է Հաճախորդի կողմից կատարված գործառնությունների գաղտնիությունը՝ համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի:

1.14. Դուք իրավունք ունեք հաղորդակցվել Բանկի հետ՝ ընտրելով Բանկի կողմից առաջարկվող տարբերակներից Ձեր նախընտրած եղանակը: Այդուհանդերձ, հատնում ենք, որ էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումն ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, վերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիության բարձր մակարդակ:

1.15. ՎՔ ստանալուն պես Ձեր կողմից Բանկին հայտնած բջջային հեռախոսահամարին կուղարկվի ժամանակավոր PIN-ծածկագիր, որը Դուք կարող եք փոխել ինքնուրույն Բանկի ցանկացած բանկոմատում քարտի առաջին իսկ մուտքագրման պահին հետևյալ սկզբունքով.

- քարտը մուտքագրել Բանկի ցանկացած բանկոմատ
- մուտքագրել Ձեր բջջային հեռախոսահամարին ստացված ժամանակավոր PIN-ծածկագիրը
- այնուհետև մուտքագրել Ձեր կողմից ինքնուրույնաբար որոշված քառանիշ PIN-ծածկագիր
- հաստատել PIN-ծածկագիրը և ավարտել գործարքը կամ իրականացնել բանկոմատով հասանելի այլ գործարք:

1.16. Հարկ ենք համարում ընդգծել, որ PIN-ծածկագիրը կիրառվում է Ձեր անձը նույնականացնելու համար բանկոմատներում և առևտրի սպասարկման կետերում գործարքներ կատարելիս: Ծածկագիրը ենթակա չէ հրապարակման կամ տրամադրման երրորդ անձանց: Հարկավոր է ուշադիր լինել ծածկագիրը մուտքագրելիս, քանի որ այն երեք անգամ շարունակաբար սխալ մուտքագրելու դեպքում Քարտն արգելափակվում է և արգելահանվում է միայն Ձեր գրավոր կամ բանավոր դիմումի հիման վրա, որի դիմաց գանձվում են Բանկի Սակագներով նախատեսված վճարներ (առկայության դեպքում): Նշենք նաև, որ Դուք կարող եք ցանկացած պահի փոխել Ձեր ծածկագիրը Բանկի ցանկացած բանկոմատի միջոցով:

1.17. Ինտերնետ միջավայրում քարտի օգտագործման անվտանգությունը բարձրացնելու նպատակով՝ Բանկն օգտագործում է "3D-Secure"/"Secure Code" ծառայությունը, որի համաձայն ինտերնետ միջավայրում "VBV/Secure code" նշում ունեցող կայքերում, քարտով վճարում կատարելիս Դուք պետք է մուտքագրեք Ձեր կողմից քարտի տրամադրման դիմում-պայմանագրում նշված բջջային հեռախոսահամարին ստացած մեկանգամյա գաղտնաբառը (ժամանակավորապես անհասանելի է):

1.18. ՎՔ կորստի կամ հափշտակության մասին պետք է անհապաղ տեղեկացնել հետևյալ եղանակներով.

- զանգահարելով Բանկի 87-87 շուրջօրյա հեռախոսահամարին և հայտնելով Ա.Ա.Հ., ծննդյան ամսաթիվ, պայմանագրի մեջ նշված թվային գաղտնագրի և/կամ այլ անձնական տվյալների /հասցե կամ Հաճախորդի անձը հաստատող փաստաթղթի համարը: Բանկը կարող է պահանջել Հաճախորդի բանավոր կարգադրության գրավոր հաստատում, նախքան Քարտն արգելափակելը: Բանավոր դիմումի ստացումից և Հաճախորդի ինքնությունը ճշտելուց հետո Քարտն արգելափակվում է Հաճախորդի կողմից նշված և սակագներով սահմանված տարբերակով:
- Ներկայանալով Բանկի ցանկացած մասնաճյուղ, անձը հաստատելուց հետո Քարտն արգելափակվում է առավելագույնը 30 րոպեի ընթացքում:

1.19. Արգելափակումից հետո ՎՔ հայտնաբերվելու դեպքում՝ Հաճախորդը պետք է տեղեկացնի այդ մասին Բանկին: ՎՔ գործողությունը կարող է վերականգնվել/արգելափակումից հանվել Սակագներով սահմանված վճարները գանձելուց հետո (առկայության դեպքում):

1.20. ՎՔ չեն կարող օգտագործվել որևէ անօրինական գործունեության կամ դրանից բխող գործարքների համար: Քարտային գործարքների օրինականության շուրջ որևէ կասկածի առկայության դեպքում Բանկն իրավունք ունի առանց Հաճախորդին ծանուցելու չհաստատել գործարքը և/կամ արգելափակել Քարտը: Բանկը կարող է նաև լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր պահանջել՝ նախքան գործարքի կատարումը:

1.21. Բանկը կարող է չհաստատել գործարքները և/կամ արգելափակել ՎՔ, եթե քարտային գործարքները կապված են հանրության կարգերին ու բարոյականությանը հակասող գործարքների հետ:

1.22. ՎՔ բանկոմատի կողմից առգրավվելու դեպքում.

- եթե քարտը առգրավվել է Բանկի մասնաճյուղի տարածքում տեղադրված բանկոմատից աշխատանքային ժամերին՝ ապա անհրաժեշտ է անձը հաստատող փաստաթղթով մոտենալ տվյալ մասնաճյուղի պատասխանատու աշխատակցին և տեղում ստանալ քարտը, եթե չկա քարտը Բանկի կողմից չտրամադրելու որևէ պատճառ:
- եթե քարտը առգրավվել է Բանկի մասնաճյուղերի տարածքներից դուրս գտնվող բանկոմատից կամ ոչ աշխատանքային ժամերին ապա Կոնտակտային կենտրոնի աշխատակիցը կապ է հաստատում Ձեզ հետ, ճշտում կատարում Ձեզ հարմար մասնաճյուղի վերաբերյալ, որից հետո անձը հաստատող փաստաթղթով զանգը ստանալուց 5 աշխատանքային օր հետո անհրաժեշտ է մոտենալ Ձեր կողմից նշված մասնաճյուղ և ստանալ քարտը, եթե չկա քարտը Բանկի կողմից չտրամադրելու որևէ պատճառ:
- եթե քարտը առգրավվել է այլ բանկի բանկոմատից, ապա Կոնտակտային կենտրոնի աշխատակիցը կապ է հաստատում Ձեզ հետ, ճշտում կատարում Ձեզ հարմար մասնաճյուղի վերաբերյալ, որից հետո անձը հաստատող փաստաթղթով զանգը ստանալուց 5 աշխատանքային օր հետո անհրաժեշտ է մոտենալ Ձեր կողմից նշված մասնաճյուղ և ստանալ քարտը, իսկ հարցերի դեպքում զանգահարել տվյալ բանկոմատի վրա նշված

հեռախոսահամարով:

- Եթե քարտը առգրավվել է Բանկի բանկոմատի կողմից մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարող եք չվանգահարել 8787 հեռախոսահամարով:

1.23. Քարտը բանկոմատի միջոցով առգրավվելու օրվանից 180 օրվա ընթացքում Հաճախորդի կողմից քարտը չստանալու դեպքում, Բանկն իրավունք ունի ոչնչացնել քարտը փակել հաշիվները, դրական մնացորդը փոխանցելով Բանկում առկա այլ հաշիվներին կամ Բանկի տարանցիկ հաշվին, որը ստանալու համար անհրաժեշտ է անձը հաստատող փաստաթղթով մոտենալ Բանկի ցանկացած մասնաճյուղ բացառությամբ քարտին տրամադրված վարկային գծի առկայության դեպքերի, որի պարագայում վարկային քարտն ու քարտային հաշիվները փակվում են միայն այն պարագայում, երբ տվյալ վարկային քարտին տրամադրված վարկային գծի մասով չկան պարտավորություններ /տվյալ դեպքում վարկային քարտին վարկային գծի տրամադրման պայմանգիրը համարում է լուծված/դադարած, իսկ վարկը ուղղվում է մարման/:

1.24. Բանկի կողմից թողարկված քարտերի քարտապանների Բանկի բանկոմատների կողմից չստացված գումարի բողոքարկման դիմումները պետք է ներկայացվեն Հաճախորդի կողմից գումարը չստանալու փաստը բացահայտելուց առավելագույնը 1 տարվա ընթացքում, նշված ժամկետից հետո ներկայացված դիմումը Բանկի կողմից ուսումնասիրման ենթակա չէ:

1.25. Բողոքը ԲԿ կողմից ուսումնասիրվում, քննվում, պատասխան է պատրաստվում և ուղարկվում Բողոքի Բանկ մուտքագրվելուց ոչ ուշ, քան 10-րդ աշխատանքային օրը, իսկ Դիմումի դեպքում ոչ ուշ քան 20-րդ աշխատանքային օրը, բացառությամբ միջազգային վճարային համակարգերի կողմից ուսումնասիրվող Բողոքները, որոնց պատասխանը տրամադրվում է մինչև 90 օր ժամկետում, իսկ արբիտրաժում քննվող գործերի դեպքում գործընթացը կարող է տևել մինչև 180 օր:

2.Քարտերի վերաթողարկում և փակում (մանրամասներին ծանոթանալու համար տես Օֆերտայի 8-րդ գլուխը)

2.1. Ձեր ՎՔ գործողության ժամկետի ավարտից հետո Բանկը, հաշվի առնելով Ձեր բանկային պատմությունը, իրավունք ունի առանց Ձեր լրացուցիչ կարգադրության վերաթողարկել Ձեր Քարտը՝ թողարկելով նոր քարտ:

2.2. ՎՔ ժամկետի ավարտից հետո ավտոմատ վերաթողարկում չի իրականացվում, եթե՝

- վերջին 6 ամսում հաճախորդի նախաձեռնությամբ գործարք չի իրականացվել (բացառությամբ Բանկի կողմից իրականացված ավտոմատ գործարքների) և քարտային հաշիվների գումարային մնացորդը չի գերազանցում 10,000 (տասը հազար) ՀՀ դրամը,
- քարտի գծով առկա է սպասարկման վճարի պարտք (3 ամիս և ավել),
- քարտը կենսաթոշակային է, սակայն հաճախորդի Բանկ ներկայանալու ամսաթիվը ակտիվ չէ (հաճախորդը վերջին 1 տարում չի ներկայացել Բանկ) կամ ներկայանալու ամսաթիվը ակտիվ է, սակայն վերջին 3 ամսում կենսաթոշակի փոխանցում տեղի չի ունեցել,
- լրացուցիչ քարտի դեպքում վերջին 6 ամսում հաճախորդի նախաձեռնությամբ Լրացուցիչ քարտով գործարք չի իրականացվել:

2.3. Ձեր կողմից վերջին 6 ամսում Ձեր նախաձեռնությամբ ՎՔ գործարք չկատարվելու (բացառությամբ Բանկի կողմից իրականացված ավտոմատ գործարքների) և հաշիվների մնացորդային գումարը 10,000 (տասը հազար) ՀՀ դրամը գերազանցելու դեպքում, Բանկը կարող է երկարաձգել քարտային հաշիվը, իսկ ֆիզիկապես Քարտի վերաթողարկում իրականացվի Ձեր կողմից Բանկ համապատասխան դիմում ներկայացնելու դեպքում:

2.4. Սույնով տեղեկացնում ենք Ձեզ, որ Բանկը իրավունք ունի միակողմանի, առանց Ձեզ նախապես տեղեկացնելու փակել ՎՔ ու քարտային հաշիվները, եթե վերջին 12 ամսում Ձեր կողմից ՎՔ որևէ գործարք չի կատարվել և քարտային հաշվին առկա միջոցները 10,000 ՀՀ դրամից քիչ են: Ընդ որում հաշվին առկա դրական մնացորդը տեղափոխվում է Բանկում առկա Ձեր այլ հաշիվներին/քարտերին կամ Բանկի տարանցիկ հաշվին: Ձեր հաշիվներին առկա մնացորդի գումարը ստանալու համար անհրաժեշտ է անձը հաստատող փաստաթղթով մոտենալ Բանկի ցանկացած մասնաճյուղ:

3.Քարտային հաշիվ

3.1. ՎՔ տրամադրելու հետ մեկտեղ Բանկը Ձեր անունով բացում է առավելագույնը 4 քարտային հաշիվներ (համաձայն Ձեր քարտի Սակագների)՝ ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, ԵՎՐՈ և ՌԴ ռուբլի արժույթներով միաժամանակ, որոնցով հաշվառվում են Ձեր քարտային գործարքները, Բանկի Սակագներով սահմանված գործարքներից բխող բոլոր տեսակի գանձումները /միջնորդավճարները/, դեբիտորական պարտքը, ինչպես նաև գանձվող տույժերն ու տուգանքները:

3.2. Քարտային գործարքների հաշվեգրման ընթացքում առաջնահերթության սկզբունքով դեբետագրվում է այն հաշիվը, որի արժույթով կատարվել է գործարքը: Տվյալ հաշվին գումարի բացակայության կամ ոչ բավարար լինելու դեպքում դեբետագրվում են մնացած արժույթներով հաշիվները՝ Ձեր կողմից Պայմանագրով նշված հերթականությամբ (տվյալ հերթականությունը Ձեր կողմից չնշելու դեպքում, Բանկը կկիրառի հետևյալ հերթականությունը՝ ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, ԵՎՐՈ, ՌԴ ռուբլի): Նման պարագայում գործարքներ հաշվառելիս Բանկը կիրառում ենք գործարքի հաշվեգրման օրվա ընթացքում Բանկի և MIR վճարահաշվարկային համակարգի կողմից սահմանված փոխարժեքները:

3.3. Ստորագրելով Դիմում-պայմանագիրը՝ Դուք ընդունում եք, որ Բանկի հանդեպ Ձեր բոլոր տեսակի պարտավորությունների գումարները Բանկն իրավունք ունի դուրս գրել Բանկում առկա Ձեր անունով բացված բոլոր հաշիվներից: Ձեր կողմից պարտավորությունների պատշաճ չկատարելու դեպքում Բանկն իրավունք ունի բռնագանձման հայտ ներկայացնել դատարան:

3.3.1 Սույնով Դուք տեղեկացվում եք, որ

- Քարտերի տրամադրման և սպասարկման բոլոր տեսակի վճարները գանձվում են քարտային հաշվից՝ համաձայն Բանկի կողմից սահմանված Սակագների, իսկ Ձեր քարտային հաշվի միջոցների անբավարարության դեպքում Բանկում գործող Ձեր այլ հաշիվներից: Քարտային գործարքը հաշվառելիս Բանկը օգտագործում է Ձեր քարտային հաշվին(ներին) առկա դրական մնացորդը: Դուք ընդունում եք, որ քարտային հաշվով գործառնությունների, այդ թվում նաև՝ արտարժույթի փոխանակում պահանջող գործարքների, հաշվառման համար անհրաժեշտ գումարի բացակայության կամ ոչ բավարար լինելու դեպքում Բանկը կարող է, առանց Ձեր նախնական հավանության կամ հետագա համաձայնության, սահմանել Ձեր քարտային հաշվի գծով գերաձախս, արգելափակել Ձեր քարտը՝ գանձելով գերաձախսի գումարը, սակագներով սահմանված տոկոսը (առկայության դեպքում նաև տույժեր): Քարտը արգելափակումից կհանվի տոկոսի/տույժերի և/կամ գերաձախսի վճարումից հետո:
- Ձեր Քարտով /անկախ Քարտի ակտիվության կարգավիճակից/ կատարվող այն գործարքների դեպքում, որոնց մասով հավաստագրում չի պահանջվում, այն է՝ offline ռեժիմում կատարվող գործարքը, և սպասարկող կապակերպությունը /խանութում, ռեստորանում, ինքնաթիռում և այլն/ online կապ չի հաստատում Քարտը թողարկող Բանկի հետ՝ համապատասխան թույլտվություն ստանալու համար, ապա վերը նշվածի արդյունքում Բանկի հանդեպ առաջացած Ձեր պարտավորության /դեբիտորական պարտքի/ համար պատասխանատու եք Դուք և պարտավորվում եք այն վերադարձնել Բանկի կողմից /գրավոր, բանավոր կամ էլեկտրոնային եղանակով/ առաջին իսկ պահանջ ստանալու դեպքում:

3.4. Բանկը պարտավոր է Ձեր կողմից չվավերացված գործարքների վերաբերյալ հայտարարության հիման վրա Ձեզ տեղեկացնել թղթային կամ էլեկտրոնային եղանակով դիմում-պահանջ լրացնելու անհրաժեշտության մասին:

3.5. Ձեր կողմից չվավերացված գործարքների վերաբերյալ Ձեր կողմից դիմում-պահանջ ներկայացնելու դեպքում Բանկը պարտավոր է ընդունել այն՝ Ձեզ տրամադրելով դիմում-պահանջը ընդունելու մասին գրավոր հավաստում (թղթային կամ էլեկտրոնային եղանակով): Եթե դիմում-պահանջը Բանկին ներկայացվում է քաղվածքը Ձեր կողմից ստանալու օրվանից առնվազն 15 օրվա ընթացքում (Պայմանագրով ավելի երկար ժամկետ սահմանված չլինելու դեպքում), Բանկը պարտավոր է ապահովել սույն կարգի 3.7 և 3.8 կետերով սահմանված պահանջները:

3.6. Եթե Ձեր կողմից չվավերացված գործարքները բողոքարկվում են Ձեր կողմից քաղվածքը ստանալու պահից 55 օրվա ընթացքում, և Ձեր դիմում-պահանջին կից ներկայացնում է սույն ամփոփագրի 3.7 կետով սահմանված ժամկետում դիմում-պահանջը ներկայացնելու անհնարինությունը հավաստող փաստաթղթեր, Բանկը պարտավոր է ապահովել սույն ամփոփագրի 3.7 և 3.8 կետերով սահմանված պահանջները:

3.7. Առանց շփման (contactless) կատարված և Ձեր նույնականացում չպահանջող գործարքների վերաբերյալ Ձեր կողմից դիմում-պահանջ ներկայացնելուց հետո Բանկը հատուցում է Ձեր հաշվից դեբետագրված միջոցները ոչ ուշ, քան դիմում-պահանջը ներկայացնելու 5-րդ օրը:

3.8. Սույն ամփոփագրի 3.5 կամ 3.6 կետերով սահմանված դեպքերում և կարգով Ձեր կողմից դիմում - պահանջը ներկայացնելուց հետո Բանկը ոչ ուշ, քան դիմում-պահանջը ներկայացնելուց հետո 90-րդ օրը.

1) հատուցում է Ձեր հաշվից դեբետագրված միջոցները, կամ

2) մերժում է Ձեր կողմից ներկայացված դիմում-պահանջում նշված գումարը հատուցելու պահանջը, եթե.

- խախտվել են սույն ամփոփագրի 3.7 կամ 3.8 կետերով սահմանված դիմում-պահանջի ներկայացման ժամկետները, կամ
- Ձեր կողմից խախտվել են վճարային քարտով գործառնությունների իրականացման հիմնական կանոններով կամ
- Պայմանագրով սահմանված դրույթները, որոնց հետևանքով են ի հայտ եկել Ձեր կողմից չվավերացված գործարքները, կամ
- Բանկն ունի հիմնավոր փաստեր, որոնք հիմք են հանդիսանում բողոքարկված գործարքները, որպես Ձեր կողմից կատարված վեղծարարություն/խարդախություն բնութագրելու համար:

4.Քարտի անվտանգության և օգտագործման նվազագույն պայմանները

4.1. Քարտի և ծածկագրի օգտագործման հետ կապված բոլոր տեսակի ռիսկերը կրում է Հաճախորդը և Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Քարտի կամ ծածկագրի օգտագործման հետևանքով իր կրած վնասների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ վնասը պատճառվել է Բանկի մեղքով:

4.2. Քարտի անվտանգությունն ապահովելու և դրա անթույլատրելի օգտագործումը բացառելու նպատակով անհրաժեշտ է.

- Քարտի պահպանել ապահով վայրում, այնպես, որ այն հասանելի չդառնա այլ անձանց: Քարտի չպահել էլեկտրամագնիսական ճառագայթման աղբյուրների (բջջային հեռախոսների, հեռուստացույցների և այլ էլեկտրական տեխնիկայի) մոտ, ինչպես նաև այլ քարտերի հետ մեկտեղ:
- Ծածկագիրը չտրամադրել երրորդ անձանց՝ ներառյալ Բանկի աշխատակիցներին:
- հիշել ծածկագիրը և չգրառել այն որևէ տեղ, առավել ևս՝ Քարտի դարձերեսին: Քարտի և ծածկագրի համատեղ պահպանումը խորհուրդ չի տրվում:
չպատասխանել էլեկտրոնային կամ փոստային նամակների, ինչպես նաև այլ հաղորդագրությունների, որոնք պահանջում են հայտնել ծածկագիրը, Քարտի համարը կամ Քարտի դարձերեսին առկա եռանիշ թվերը (CVV2 կոդը):
- եթե ինտերնետի միջոցով գործարք կատարելիս պահանջվում է ծածկագրի մուտքագրում, անհապաղ հրաժարվեք գործարքից: Ծածկագիրն անհրաժեշտ է միայն բանկոմատներում և կանխիկացման համար նախատեսված POS-տերմինալներում գործարքներ կատարելիս, ինչպես նաև, առևտրային կետերում ապրանքի/ծառայության դիմաց վճարելիս: Ինտերնետով գործարքներ կատարելիս օգտվել միայն վստահելի կայքերից:
- բանկոմատներով գործարքներ իրականացնելիս նախընտրել ՎՏԲ-Հայաստան Բանկ-ի բանկոմատները: Հետևել, որ ծածկագիրը մուտքագրելիս այն տեսանելի չլինի այլ անձանց: Անհապաղ դիմել Բանկ, եթե հիմքեր կան ենթադրելու, որ ծածկագիրը հայտնի է դարձել այլ անձանց:
- հետևել, որ POS-տերմինալներով անկանխիկ գործարքներ կատարելիս վճարումն իրականացվի Հաճախորդի ներկայությամբ և Քարտը դուրս չբերվի տեսադաշտից: Նախքան վճարման անդորրագիրը ստորագրելը՝ ստուգել դրա վրա նշված վճարման ենթակա գումարի ճշտությունը:
- օգտվել Քարտով կատարվող գործարքների վերաբերյալ SMS ծանուցումներ ստանալու Բանկի SMS banking ծառայությունից: Այն հնարավորություն է տալիս անմիջապես տեղեկանալ Քարտով կատարված գործարքների վերաբերյալ և ժամանակին միջոցներ ձեռնարկել անճշտություններն ուղղելու և Քարտի ապօրինի օգտագործումը կանխելու ուղղությամբ: Բանկը սպառողի հետ պայմանագիր կնքելիս վերջինիս տրամադրում է քարտի օգտագործման նվազագույն պայմանները,

5. "Քարտային հաշվին դրամական փոխանցման մուտքագրում հեռախոսապանգի/վիդեոպանգի միջոցով" ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) տրամադրման հիմնական կանոններ

5.1. Ծառայությունը մատուցվում է միայն այն ֆիզիկական անձանց, որոնք դրամական փոխանցում են ստանում Բանկում գործող և Ծառայությանն անդամակցող միջազգային դրամական փոխանցումների համակարգերի միջոցով:

5.2. Ծառայությունը հասանելի է Ձեզ Բանկի կողմից սահմանված օրերին և ժամերին:

5.3. Օգտվելով Ծառայությունից՝ Դուք կարող եք հեռախոսապանգի/վիդեոպանգի միջոցով՝

- ստուգել դրամական փոխանցման առկայությունը համակարգում:
- հանձնարարել Բանկին Ձեզ ուղարկված դրամական փոխանցման գումարը մուտքագրել Ձեր քարտային հաշվին:

5.4. Ծառայությունը մատուցվում է հեռախոսապանգի/վիդեոպանգի միջոցով և տրամադրվում է սույն կանոններով և Բանկի ներքին կանոնակարգերով սահմանված հաճախորդի նույնականացման գործընթացն անցնելուց հետո:

6. Վեճերի լուծման կարգը՝

Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնության չգալու դեպքում վեճը լուծվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հաճախորդն հնարավորություն ունի Բանկի և իր միջև բխող բոլոր պահանջները ներկայացնել ֆինանսական համակարգի հաշտարարին:

Տեղեկացնում ենք, որ Բանկը կնքել է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր այն պահանջներով, որոնց ընդհանուր չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը և գործարքի ընդհանուր գումարը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը:

Հայտարարություն: Հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:

Հայտարարություն: Առանց հաշվետիրոջ կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա: Ընդ որում, Հաճախորդն իր հաշվից դրամական միջոցների բռնագանձման վերաբերյալ տեղեկացվում է տվյալ հաշվի քաղվածքի միջոցով՝ իր կողմից նախապես ընտրված հաղորդակցման /քաղվածքի ստացման/ եղանակով և կարգով (քաղվածքի ծանուցման եղանակի բացակայության դեպքում՝ փոստով՝ բնակության կամ հաշվառման հասցեով):

Բանկը՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով, կարող է Հաճախորդից «Ծանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ Հաճախորդին (նման պահանջի առկայության դեպքում):

Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA))՝ հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

7. Ավանդը երաշխավորված է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից՝ համաձայն «Ֆիզիկական անձանց ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի:

Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝



Ավանդի արժույթային կառուցվածքը	Եթե Նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե Նույն բանկում ունեք միայն արտարժույթային ավանդ	Եթե Նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն ՀՀ դրամից պակաս է	Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավել է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	16 մլն ՀՀ դրամ	7 մլն ՀՀ դրամ	7 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ 7 միլիոն ՀՀ դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով)	16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)
* Նույն բանկում բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ, բոլոր արտարժույթային ավանդները համարվում են մեկ ավանդ: Համատեղ ավանդը համարվում է առանձին ավանդ՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով:				

* Ավանդ են համարվում նաև ֆիզիկական անձանց կողմից Բանկում բացված բոլոր հաշիվներին/քարտերին գտնվող դրամական միջոցները և դրանց վրա հաշվարկված տոկոսագումարները:

Ծառայության վերաբերյալ ամբողջական տվյալներին կարող եք ծանոթանալ www.vtb.am կայքում, ինչպես նաև վանգահարելով միասնական տեղեկատվական ծառայություն 87 87 հեռախոսահամարով:

Ուշադրություն՝ «Ձեր Ֆինանսական տեղեկատուն» ֆիզիկական անձանց առաջարկվող ծառայությունների որոնման, համեմատման և Ձեզ համար ամենաարդյունավետ տարբերակի ընտրությունը հեշտացնող էլեկտրոնային համակարգ է: